ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսֆի 1

№ 609-Ա « 28 » փետրվարի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, Ն.ՇԵՆԳԱՎԻԹ 11-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ Հ.34 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՇԱՀԵՆ ՍՈՒՐԵՆԻ ՏՈՆՈՅԱՆԻ, ՄՀԵՐ ԴԱՎԻԹԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Շահեն Սուրենի Տոնոյանի (ծնված 21.09.1969թ.) և Միեր Դավիթի Մանուչարյանի (ծնված 10.06.1985թ.) դիմումները:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 02.12.2022թ. հ.ԱՏ-02122022-01-1002 տեղեկանքը, 05.09.2023թ. Շենգավիթ, Ն.Շենգավիթ 11-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.28/20 բնակելի տան սեփականատերերի և 19.11.2023թ. Շենգավիթ, Ն.Շենգավիթ 11-րդ փողոց 2-րդ փակուղի հ.32/2 բնակելի տան սեփականատիրոջ համաձայնագրերը՝ համադրումները ուղղելու վերաբերյալ, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 17.10.2024թ. հ.Հ-12078 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.12.2024թ. հ.20-Ել-Դ-126652-23 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Շենգավիթ, Ն.Շենգավիթ 11-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.34 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով.

1.Վերականգնել ք.Երևան, Շենգավիթ, Ն.Շենգավիթ 11-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.34 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Շահեն Սուրենի Տոնոյանի, Միեր Դավիթի Մանուչարյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 83.11քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 83.11քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝

ք.Երևան, Շենգավիթ, Ն.Շենգավիթ 11-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.34 հասցեում գտնվող 83.11քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ